ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 005-Ա որոշման համաձայն, համայնքում հանրային բաց լսումների և /կամ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան՝ 2025 թվականի հունիսի 24-ին, ժամը 11:00-ին Արմավիրի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրային լսում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Արմավիր համայնքի 2026 թվականի սուբվենցիոն ծրագրով նախատեսվող աշխատանքների վերաբերյալ.

Քննարկումն անցկացնում էր համայնքի ղեկավար Վարշամ Սարգսյանը: Հանրային քննարկմանը ներկա էին համայնքի ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ռ.Մանուկյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ), որը, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագրերի ուղենիշային փաստաթուղթ, ուղղվում է տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը: Այն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է ֆինանսական տարիների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության յուրաքանչյուր բնագավառում: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրն ակնկալում է եկամուտների և ծախսերի արդյունավետ կառավարում, ոլորտային տարբեր ծրագրերի իրականացման պլանավորված մոտեցում, ուղղակի և ելքային արդյունքների ձեռքբերում՝ միաժամանակ կիրառելով նոր որակի և մակարդակի կառավարում: Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը համայնքի հնգամյա զարգացման ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքն է, որը հնարավորություն է տալիս առավել իրատեսական և առարկայական դարձնել նախատեսվող ծրագրերը: Համայնքի հնգամյա զարգացման պլանը երկարաժամկետ ծրագիր է, որը հաստատվում է մեկ անգամ ավագանու լիազորությունների ամբողջ ժամանակահատվածի՝ 5 տարվա համար,իսկ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակվում և հաստատվում է յուրաքանչյուր տարի՝ առաջիկա 3 տարիների համար: Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն տալով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար:

Այնուհետև համայնքի ղեկավար Վարշամ Սարգսյանը մասնակիցներին ներկայացրեց սեփական եկամուտների ցուցանիշներով և իրականացվող աշխատանքների առաջնահերթություններով պայմանավորված՝ 2 ծրագրային հայտերի ներկայացման նպատակահարմարությունը.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Լերմոնտով փողոցի, Թումանյան փողոցի Սայաթ-Նովա-Ս. Շահումյան հատվածի, Տիգրան Պետրոսյան փողոցի Հանրապետություն-Գորկի հատվածի հիմնանորոգում:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի Հունան Ավետիսյան փողոցի 1-ին փողոցից Հ. Ավետիսյան 2-րդ նրբանցք ընկած հատվածի և Հունան Ավետիսյան 1-ին նրբանցքի հիմնանորոգում:

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի 27, Մյասնիկյան փողոցի 31 և Չարենցի փողոցի 33, Մաշտոցի փողոցի 1 և 3, Երևանյան փողոցի 42, Բաղրամյան փողոցի 1, 3, 5, 5/1, Սայաթ-Նովա փողոցի 1Ա, 2Ա, 3Ա, 4Ա, 5Ա, 6Ա, 7Ա, 8Ա, Հերացի փողոցի 8, 8/1, 10, 12, Չարենցի փողոցի 24, Սայաթ-Նովա փողոցի 23, Հանրապետության փողոցի 31 և 33, Ջիվանի փողոցի 5, 7, 9, 11, Սայաթ-Նովա փողոցի 109, Հանրապետության 12 և 20, Արարատյան փողոցի 1, 3, 5, 1/1, Սահմանապահների փողոցի 45, 46, 47, Շահումյան փողոցի 15 և 39, Սահմանապահների փողոցի 6Ա, 5-րդ փողոցի 1-ին բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների հիմնանորոգում:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի 27, Մյասնիկյան փողոցի 31 և Չարենցի փողոցի 33, Մաշտոցի փողոցի 1 և 3, Երևանյան փողոցի 42, Բաղրամյան փողոցի 1, 3, 5, 5/1, Սայաթ-Նովա փողոցի 1Ա, 2Ա, 3Ա, 4Ա, 5Ա, 6Ա, 7Ա, 8Ա, Հերացի փողոցի 8, 8/1, 10, 12, Չարենցի փողոցի 24, Սայաթ-Նովա փողոցի 23, Հանրապետության փողոցի 31 և 33, Ջիվանի փողոցի 5, 7, 9, 11, Սայաթ-Նովա փողոցի 109, Հանրապետության 12 և 20, Արարատյան փողոցի 1, 3, 5, 1/1, Սահմանապահների փողոցի 45, 46, 47, Շահումյան փողոցի 15 և 39, Սահմանապահների փողոցի 6Ա, 5-րդ փողոցի 1-ին բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների խմելու ջրամատակարարման նոր համակարգի կառուցում:

Հանրային լսման մասնակիցների կողմից ծավալվեց քննարկում, որից հետո առաջարկվեց սույն ծրագրերն ընդգրկել համայնքի ավագանու առաջիկա նիստի օրակարգում:

Ամփոփելով հանրային քննարկումը՝ համայնքի ղեկավար Վարշամ Սարգսյանը շնորհակալություն հայտնեց համայնքի բնակիչներին համայնքային կառավարմանը վստահելու և իրենց կողմից տեղական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունները կատարելու և համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը նպաստելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Արձանագրող՝ Ն. Խաչատրյան

24.06.2025թ.